



«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

19.10.2016

ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանին

Հարգելի պրն Նալբանդյան,

Հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածների պահանջները, խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե՛

- Ո՞ր ընկերությունն է կամ ընկերություններն են սպասարկում Վանաձոր-Ստեփանավան ավտոբուսային եւ միկրոավտոբուսային երթուղիները:
- Նշված ընկերությունը/ընկերությունները ե՞րբ, ի՞նչ հիմքով են ստացել երթուղին սպասարկելու իրավունք, ի՞նչ ժամկետով եւ ի՞նչ սակագնով/ուղեվարձով:
- Ի՞նչ պարտավորություններ ունեն սվյալ ընկերությունները՝ ըստ մրցույթի պայմանների եւ համապատասխան պայմանագրի: Խոսքը նաեւ ուղեվարձի արժեքի մասին է:
- Եթե նշված ընկերությունը/ընկերությունները նախկինում եւս մի քանի անգամ հաղթել են նշված երթուղին սպասարկելու մրցույթում, ապա խնդրում եմ տեղեկատվություն տրամադրել նաեւ այն մասին, թե ո՞ր թվականներին է դա եղել:

Կանխավ շնորհակալություն
«Հետաքննող լրագրողներ» հ/կ լրագրող

Գագիկ Աղբալյան

